Արձանագրություն N 6

ՀՊՏՀ-ԳՀԾՁԲ-20/ԲԱԾ-1 ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

13 փետրվարի 2020թ.
ժամը 15:00

Մասնակցում էին հանձնաժողովի նախագահ՝ Մամիկոն Հովհաննիսյանը, անդամներ՝ Գոհար Սարգսյանը, Գայանե Տոռոզյանը, Էմմա Ադամյանը և քարտուղար Էռնեստ Դավթյանը:

Օրակարգ

Գնման գործընթացի կասեցում համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածը և 50-րդ հոդվածի 9-րդ մասով

1. **ՀՊՏՀ-ԳՀԾՁԲ-20/ԲԱԾ-1** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար Էռնեստ Դավթյանը նիստը հայտարարեց բացված և տեղեկացրեց, որ հրավերով սահմանված ժամկետում «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ն ներկայացրել է բողոք՝ որում վիճարկում է 6 փետրվարի 2020թվականի գնահատող հանձնաժողովի նիստի որոշումը:
2. Հանձնաժողովը հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածը՝ «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը»:
3. Հանձնաժողովը որոշեց կասեցնել գնման գործընթացը մինչև Գնումների հետ կապված բողոքը քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու այն տեղեկագրում հրապարակելու, որոշումը պատվիրատուին, լիազորված մարմին ու բողոքարկման ընթացակարգում ներգրավված կողմերին ուղարկելու հաջորդող օրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի՝

նախագահ՝ _____ Մամիկոն Հովհաննիսյան

անդամներ՝ _____ Գոհար Սարգսյան

_____ Գայանե Տոռոզյան

_____ Էմմա Ադամյան

քարտուղար՝ _____ Էռնեստ Դավթյան